«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-727-10.09.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում նախատեսել տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափի վերաբերյալ կարգավորում, որի համաձայն՝ բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրված կրեդիտների համար տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը չի կարող գերազանցել կրեդիտավորման պայմանագրի կնքման օրվա դրությամբ ԿԲ-ի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

Առաջարկվող կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորվում է գործնականում տարեկան փաստացի տոկոսադրույքի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցելու նկատառումներից ելնելով: Մասնավորապես, Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ գործող կարգավորումների պայմաններում, երբ տարեկան փաստացի տոկոսադրույքը որևէ կերպ սահմանափակված չէ բոլոր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող գրեթե բոլոր վարկատեսակներով, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցվում է, և վարկառուները ստիպված են անհամաչափ մեծ գումար վճարել ստացված վարկի դիմաց, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում մարդկանց կենսամակարդակի վրա՝ բանկերի և վարկային կազմակերպությունների համար ապահովելով գերշահույթ:

Հարկ է նշել, որ առաջարկվող կարգավորումը պետք է դիտարկել կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների համատեքստում: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Օրենսգրքի 887-րդ հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Օրենսգրքի 46-րդ գլուխը կարգավորում է փոխառության հետ կապված իրավահարաբերությունները: Ընդ որում, Օրենսգրքի 879-րդ հոդվածը, ամրագրելով փոխառության գումարից տոկոսներ ստանալու՝ փոխառուի իրավունքը, միևնույն ժամանակ նախատեսում է այդ տոկոսների առավելագույն չափի սահմանափակում: Մասնավորապես, Օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

Օրենսգրքի՝ վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ վարկային պայմանագրի նկատմամբ փոխառության պայմանագրին վերաբերող գլխի կանոնները, այդ թվում՝ պայմանագրով սահմանվող տոկոսների առավելագույն չափի սահմանափակմանը վերաբերող դրույթը, կարող են կիրառվել այն դեպքում, եթե վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Այսինքն՝ բանկերը կամ վարկային կազմակերպությունները վարկային պայմանագրերով նախատեսվող տոկոսների չափի սահմանման հարցում Օրենսգրքով որևէ կերպ սահմանափակված չեն:

Այս կապակցությամբ թիվ ԱՎԴ/4/0145/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում իր դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Օրենսգրքի 46-րդ և 47-րդ գլուխներով սահմանված նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ Օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում օրենսդիրը, ելնելով Օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ

այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է Օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով:

Փաստորեն, Օրենսգրքով կողմերին հնարավորություն է տրված պայմանագրի պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, այդ թվում՝ տոկոսների առավելագույն չափին վերաբերող կարգավորումներից տարբերվող այլ կարգավորումներ՝ պայմանով, որ դրանք չեն հակասի Օրենսգրքի՝ վարկային հարաբերությունների կանոնակարգմանն ուղղված 47-րդ գլխի կանոններին:

Միաժամանակ պետք է նշել, որ ներկայումս տարեկան փաստացի տոկոսադրույքի վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով:

Նշված իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումները բխում են միջազգային լավագույն փորձից և բավարարում են ԵՄ-ՀՀ համագործակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

Վերը թվարկված իրավական ակտերի համաձայն տարեկան փաստացի տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ցույց է տալիս բոլոր տոկոսները և այլ վճարումները, որոնք սպառողը պետք է կատարի վարկավորման համար և հնարավորություն է տալիս սպառողներին մեկ թվի միջոցով համեմատել նույն տեսակի վարկերը և կատարել ընտրություն: Դրա մեջ ներառվում են անվանական տոկոսադրույքը և բոլոր այն պարտադիր վճարները, որոնք սպառողը կատարում է ինչպես վարկը տրամադրող կազմակերպությանը, այնպես էլ այլ կազմակերպություններին ու անձանց, ներառյալ՝ պետական մարմիններին կատարված վճարները: Մասնավորապես՝ այդ ծախսի մեջ են մտնում վարկի ձևակերպման վճարը, փաստաթղթերի պատրաստման վճարը, ապահովագրական ծախսերը, գրավի առարկայի գնահատման ծախսերը, գրավի ձևակերպման վճարը և վերոնշյալ իրավական ակտերով սահմանված այլ ծախսեր: Բացառություն են կազմում այնպիսի վճարները, որոնք հաճախորդը պետք է կատարի անկախ վարկը վերցնելու հանգամանքից: Հետևաբար՝ պետք է նշել, որ.

1) Փաստացի տոկոսադրույքի մեջ մտնող մի շարք վճարների չափերը կարող են պայմանավորված լինել նաև վարկի տրամադրմամբ զուգորդվող այլ գործընկեր կազմակերպությունների (ապահովագրավճարները՝ ապահովագրական ընկերությունների կողմից, գույքի գնահատման վճարները գնահատողների կողմից, նոտարական

վճարները՝ նոտարների կողմից, կադաստրային ծառայություններ և այլն) կողմից տրամադրվող ծառայություններով: Ընդ որում՝ առանձին դեպքերում ֆինանսական կազմակերպությունը կարող է հավելյալ ծառայություններ մատուցել իր հաճախորդին՝ վարկի ստացմանն ուղեկցող գործընթացների անմիջականորեն կազմակերպումը և դրանից բխող վճարները ներառելով իր կողմից առաջարկվող վարկային պրոդուկտի մեջ և դրա համար գանձելով համապատասխան սպասարկման վճարներ,

2) Ոչ բոլոր պարտադիր վճարներն են կազմակերպության համար եկամուտ ձևավորող վճարներ,

3) Փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է այն ենթադրությամբ, որ պայմանագրի գործողության ընթացքում որևէ պայման չի փոխվելու, հետևաբար՝ այն չի արտացոլում ընթացիկ ցանկացած փոփոխություն (ըստ «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքի), հակառակ պարագայում այն հաշվարկելը կլիներ անհնար: Սա ինչպես արդեն նշել ենք, նպատակ ունի սպառողին տալ նմանատիպ վարկերը համեմատելու և ընտրություն կատարելու հնարավորություն,

4) Այդ տոկոսադրույքը կարճաժամկետ վարկերի (մինչև մեկ տարի ժամկետով տրամադրված) և երկարաժամկետ վարկերի դեպքում նույն պայմանների առկայության պարագայում տարբեր պատկեր է ցույց տալիս: Օրինակ, եթե վարկի գումարը 500 000 ՀՀ դրամ է, վարկի հետ կապված պարտադիր վճարը՝ վարկի մայր գումարից 3%, իսկ անվանական տոկոսադրույքը 15% է, ապա մեկ ամիս ժամկետով տրամադրված վարկի փաստացի տոկոսադրույքը կկազմի 66%, մինչդեռ նույն պայմաններով, սակայն մեկ տարուց ավելի ժամկետով տրամադրված վարկի դեպքում փաստացի տոկոսադրույքը կկազմի 23%,

5) Որպեսզի սպառողը կարողանա մեկ թվի միջոցով համեմատել նմանատիպ, բայց տարբեր ժամկետայնությամբ վարկատեսակները, փաստացի տոկոսադրույքը վերածվում է տարեկան տոկոսադրույքի, որն էլ ապահովում է դրանց համադրելիությունը,

6) Քանի որ տարեկան փաստացի տոկոսադրույքը բոլոր դեպքերում տարեկան տոկոսադրույք է, ուստի մինչև մեկ տարի ժամկետով տրամադրված վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքը անհամեմատ բարձր մեծություն է թվում՝ համեմատած երկարաժամկետ վարկերի հետ, ինչը զուտ մեթոդաբանական ցուցանիշ է: Դա է պատճառը, որ մեր շուկայում որոշ դեպքերում առկա են բարձր փաստացի տոկոսադրույքներ, սակայն իրականում այն կախված է վարկի ժամկետից, վարկի հետ կապված վճարների կատարման

հաճախականությունից և կարող է էականորեն ցածր լինել երկարաժամկետ վարկերի դեպքում:

Նախագծով սահմանափակման տարբերակված մոտեցում է նախատեսվում վարկատու տարբեր սուբյեկտների համար: Մասնավորապես հասկանալի չէ, թե ինչու է նշված դրույթը սահմանվում միայն բանկերի համար և ոչ՝ վարկային կազմակերպությունների և գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Նշվածի վերաբերյալ չեն ներկայացվել հիմնավորումներ, թե ինչով է պայմանավորված նման տարանջատումը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Նախագծի հիմնավորման մեջ բացի բանկերից նշվում են նաև վարկային կազմակերպությունները, ինչը տարընկալման տեղիք է տալիս:

Բացի դրանից, հայտնում ենք, որ Նախագծով առաջարկվող սահմանաչափի վերաբերյալ առկա չէ որևէ հաշվարկ-հիմնավորում, ինչպես նաև գնահատված չէ Նախագծով առաջարկվող մոտեցման ազդեցությունը սպառողական կրեդիտների աճի և միջնորդական ծառայության հասանելիության վրա:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ նախաձեռնությամբ ենթադրվող սահմանափակման առկայությունն անխուսափելիորեն ռիսկ է առաջացնելու ստվերային դրամաշրջանառության և վաշխառության ծավալների մեծացման տեսակետից, քանի որ առաջարկվող փոփոխությունը որևէ ազդեցություն չի կարող ունենալ նման կրեդիտների պահանջարկ ունեցող անձանց քանակի և/կամ վերջիններիս եկամուտների մակարդակի վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Նախագիծը Օրենսգրքով սահմանված պայմանագրի ազատության սկզբունքի և 887-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված կարգավորման առումով խնդրահարույց է:

ՀՀ կենտրոնական բանկը նաև ուսումնասիրել է միջազգային փորձը և հայտնում է հետևյալը.

1) Համեմատաբար բարձր տոկոսադրույքով տրամադրվող վարկերը սովորաբար կարճաժամկետ են և փոքր ծավալներով, լուծում են վարկառուների կարճաժամկետ և հրատապ ֆինանսական խնդիրները: Այսպես կոչված միկրովարկավորումը խթանում է նաև նորաստեղծ և բարդ բիզնես-ծրագրեր չենթադրող, փոքր բիզնեսի հիմնումը և զարգացումը: Նույնիսկ 2006 թվականին տնտեսագետ Մուհամմադ Յունուսը ստացել է Նոբելյան մրցանակ խաղաղության բնագավառում՝ հիմնելով միկրովարկային կազմակերպություն, ինչը օգնեց նվազեցնել աղքատությունը Բանգլադեշում,

2) Եվրամիության մակարդակով վարկավորման ծախսի, տոկոսադրույքի սահմանափակման միասնական կարգավորման մոտեցում առկա չէ և տարբեր ԵՄ երկրներ տարբեր կերպ են անդրադառնում նշված հարցին,

3) Մի շարք երկրներում, այդ թվում՝ զարգացած, առկա են որոշ կարգավորումներ սպառողական կարճաժամկետ, չապահովված վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ: Նման սահմանափակումներ կան Ավստրալիայում, ԱՄՆ որոշ նահանգներում, Եվրոպական երկրներում և այլն: Չնայած այն հանգամանքին, որ մի շարք երկրներում կան որոշ սահմանափակումներ հենց փաստացի տոկոսադրույքների մասով, այնուամենայնիվ պետք է նշել, որ կարգավորման միտումը ոչ թե վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի սահմանափակում կիրառելն է, այլ այդ տոկոսադրույքի նկատմամբ սպառողներին տարբեր գործիքների միջոցով նախապես տեղեկացնելն է, որպեսզի նրանք կարողանան համեմատել նույն տեսակի վարկերը և ընտրություն կատարեն,

4) Ռուսաստանի Դաշնությունում օրենսդրորեն սահմանված է միկրովարկի տոկոսադրույքի վերին սահմանաչափ՝ 365 %, Մեծ Բրիտանիայում՝ 100 % (որոշ դեպքերում սպառողական վարկերի համար ընդհանրապես չկա տոկոսադրույքի սահմանափակում), Իտալիայում՝ 150 %, Պորտուգալիայում՝ 133 %, Էստոնիայում՝ միջին փաստացի տոկոսադրույքի եռապատիկը, Ֆրանսիայում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսադրույք՝ գումարած 33 %, Հյուսիսային Աֆրիկայի երկրներում (Մարոկկո, Թունիս, Լիբիա, Ալժիր, Եգիպտոս)՝ ամսական 3 %-5 %, ԱՄՆ-ում նահանգների մեծ մասում առավելագույն սահմանաչափ չկա, իսկ միկրովարկավորման տոկոսադրույքները տատանվում են միջինում 400 %-ից մինչև 1800 % (կախված վարկի տեսակից, չափից և ժամկետից):

Հարկ ենք համարում շեշտել, որ արդեն իսկ քայլեր են նախաձեռնվել պատասխանատու վարկավորման մշակույթի ամրապնդման ուղղությամբ: Ավելին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նախկինում ևս տարբեր քաղաքական ուժեր առաջարկել են նման կարգավորումներ, որպես փոխզիջում՝ 2020 թվականի հունիսի 3-ին ընդունվեց «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքի համաձայն «Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով մինչև երեք ամիս ժամկետով կնքվող՝ մինչև 300,000 դրամի չափով սպառողական կրեդիտների համար սահմանում է պարտադիր պահանջներ և պայմաններ, վարկավորման կանոններ՝ հիմք ընդունելով սպառողի վարկունակության, սպառողի պարտքի և եկամտի հարաբերակցության, վարկը սպասարկելու՝ սպառողի ունակության գնահատման չափանիշները:»: Նշված դրույթը կկիրառվի 2021 թվականից:

Նշենք նաև, որ ներկայումս բանկերի կողմից տրամադրվող սպառողական վարկերի միջին փաստացի տոկոսադրույքը չի գերազանցում 20 %-ը:

Ամփոփելով վերաշարադրվածը՝ հաշվի առնելով Նախագծի խնդրահարույց կարգավորումները, ուսումնասիրության արդյունքում բացահայտված միտումները, միջազգային կարգավորման փորձը և ներկայիս իրավական հնարավորությունների սահմանները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Նախագծով առաջարկվող փոփոխությունների ընդունումը նպատակահարմար չի համարում և առաջարկում է գործող օրենքը թողնել անփոփոխ: